1632·

Ի Յովհաննեսէ վարդապետէ Կ· Պոլսեցւոյ պատրիարք անուամբ, մինչ գնայր ի Հռոմ, պատահեցաւ ի Լով քաղաք, ուր օրինակեաց զՊատմագիրս Վարդանայ վարդապետի, խիստ հնացեալ։ Թվ· ՌՁ· դեկտ Ա։

1634·

Ես խաչատուր եմ Լեհացի·
Որ սուրբ Կանոնքըս գրեցի,
Թվականիս Հայոց ազգի
Հազար ութսուն և երեք։
Զի գաւառիս Ռատաւզի (Ռոտոսգոյ)
Որ մականուամբ Թէքիրտաղ կոչի,
Ի դուռն Ս· Յովհաննէս Նորընծայ Աւետարանչի·
Առաջնորդութեամբ սուրբ ուխտիս
Տէր Գրիգոր քաջ հռետոր բարունապետի,
Այլ և բազում քահանայից որ աստ կան հաւաքեալ։
Դարձեալ, ես խաչատուրս եմ մեղաք գերի
Յոյժ անպիտան և խոտելի·
Ողորմութեամբ աստուածային աւարտեցաւ
Կանոնքս աւգոստոսի ամսոյ ԻԳ·
Ցիշատակ Տէր Մինաս գրոց աշակերտի,
Եւ քարոզող Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի·
Եւ շնորհս տացէ Ս· Հոգին՝ ամենայնի,
Այժմ և անդրաւ յաւիտենի· ամէն։

[Կանոնագիրք, ի Հռոմ]։

1635·

Օրհնութիւն և գոհութիւն և փառք ամենասուրբ Երրորդութեանն, որ ետ զօրութիւն սկարութեանս իմոյ, գրել զայս գիրս՝ որ կոչի Հարցմանց (Գր· Տաթեւ)։ Արդ այսմ գրիս փափաղող գերերջանիկ և աստուածարեալ և սքրբազան Տէր Անդրէաս քահանայն, յոյժ սիրող աստուածային տառիցն և ջատագով ուղղափառ հաւատոյ և ախոյեան, յաղթող ընդդէմ ամենայն հերձուածողաց։ Արդ, գրեցաւ սա ի թուականիս Ռ և ՁԳ, մայիս ամսոյ 21, ի թագաւորութեան Լեհաց Դ Վլատիսլաւ գրայլին· Յայսմ ամի զՄոսքովու թագաւորութիւնն առաւ։ Ի Նորաշէն քաղաքս որ կոչի Նովինա, ի դուռն Ս· Աստուածածնին· ի հայրապետութեան Ս· Էջմիածնայ Տէր Փիլիպպոս կաթողիկոսին։ Ցիշատակ պատուական և գերամաքուր Տէր Անդրէաս սրբակրօն քահանայն, և հրեշտակերամ զարմից իւրոց, մեծի և փոքու· ամէն։ [Հարցմանց Տաթեւաց· Յէջմիածին]։